ԿԱՐԾԻՔ

*Գագիկ Կառլենի Էմինյանի **«Հասարակագիտական առարկաները որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք»** թեմայով, ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ*

Գագիկ Կառլենի Էմինյանի «Հասարակագիտական առարկաները որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք» թեկնածուական ատենախոսության թեման անվիճելիորեն արդիական է: Բոլոր ժամանակներում էլ առանձնակի կարևորվել է սերունդների հայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը: Սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական վերջին իրադարձություններն իրենց ազդեցությունն են թողնում ոչ միայն հայրենասիրության ընկալման, այլև դրսևորման անհրաժեշտության վրա, ինչով էլ հեղինակը հիմնավորում է թեմայի արդիականությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագ դպրոցը մեր իրականության մեջ նոր իրողություն է, ուստի սովորողների հայրենասիրական դաստիարակության գործընթացում հասարակագիտական առարկաների դերի, նշանակության, դրանց տեսական և գործնական հնարավորությունների վերաբերյալ ատենախոսի կողմից իրականացված ուսումնասիրությունները կարող են արժեքավոր հիմք դառնալ՝ հետևություններ կատարելու համար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 121 սկզբնաղբյուր պարունակող գրականության ցանկից, ներառում է 2 գծապատկեր, 3 աղյուսակ, 24 տրամագիր, 4 հավելված, 2 նկար: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 228 էջ (ներառյալ հավելվածները):

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, հստակ ձևակերպված են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական, գործնական նշանակությունը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Հայրենասիրական դաստիարակության գիտատեսական հիմքերը», բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում, որ վերնագրված է «Հայրենասիրական դաստիարակության էությունը և բովանդակությունը», հեղինակն անդրադառնում է «հայրենասեր» և «հայրենասիրություն» հասկացությունների էությանն ու բովանդակությանը: Արդարև, ընդունելի է, որ ժամանակն է նորովի մեկնաբանելու վերոբերյալ երկու եզրույթները: Համադրելով տարբեր աղբյուրներ և իր պատկերացումները՝ ատենախոսը ներկայացրել է հայրենասերի կատարելատիպը:

«Հայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով երկրորդ ենթագլխում հեղինակն անդրադարձել է հայրենասիրական դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցման անհրաժեշտությանը:

«Հասարակագիտական առարկաների հայեցակարգերը՝ որպես հայրենասիրական դաստիարակության տեսական հիմքերից մեկը» երրորդ ենթագլխում հեղինակն ուսումնասիրել, համեմատել և համադրել է հանրակրթական ուսումնական հաստատությունների հասարակագիտական առարկաների հայեցակարգերը: Մասնավորապես բերվել են մի քանի օրինակներ հասարակագիտական առարկաների այն թեմաներից, որոնց արդյունավետ ուսումնասիրումը կնպաստի սովորողների՝ որպես հայրենասեր քաղաքացու ձևավորմանը: Առարկայական չափորոշիչները դիտարկվել են որպես սովորողների հայրենասիրական դաստիարակության կարևոր նախադրյալ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Հասարակագիտական առարկաների ուսուցման արդյունավետ կազմակերպումը՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման և դրսևորման հիմք», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հասարակագիտական առարկաների հնարավորությունները ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման գործում», հեղինակն անդրադարձ է կատարել հասարակագիտական առարկաների բովանդակային հնարավորություններին և ուսուցման արդյունավետ պայմանների ապահովման անհրաժեշտությանը՝ շեշտադրելով տարբեր առարկաներից կարևորագույն թեմաների ուսուցումը, որոնք առավելապես կնպաստեն սովորողների հայրենասիրական դաստիարակությանը՝ միաժամանակ ընդգծելով հայրենագիտական գիտելիքների ընդլայնման և խորացման անհրաժեշտությունը:

«Հասարակագիտական առարկաների ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության միջոց» վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են հասարակագիտական առարկաների ուսուցման ձևերի ու մեթոդների բազմազանությունը, նրանց ընտրության մանկավարժական հիմքերը:

Այս գլխի երրորդ ենթագլուխը, որը վերնագրված է «Միջառարկայական կապերի ապահովումը որպես հայրենասիրական դաստիարակության կատարելագործման պայման», հեղինակն անդրադարձել է միջառարկայական կապերի ապահովման խնդրին:

Գ. Էմինյանը հանգել է այն եզրակացության, որ հասարակագիտական առարկաների միջև կապը նպատակաուղղված պետք է լինի սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը, թեմայի բազմակողմանի լուսաբանմանը, ինչը կնպաստի ձեռք բերված գիտելիքները գործնականում օգտագործելու խնդրի արդյունավետ լուծմանը: Կարևորելով սովորողների հայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործընթացում միջառարկայական կապերի ճիշտ և նպատակային իրականացումը՝ հեղինակը բերել է մի քանի համակցված դասերի օրինակներ «Հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Անգլերեն» առարկաներից՝ նվիրված Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը, «Հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Աշխարհագրություն» առարկաներից՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության հռչակմանը և այլն:

Երրորդ գլուխը՝ «Ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման և դրսևորման գործընթացի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների վերլուծություն և ամփոփում», բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ «Հայրենագիտական դասընթացի մշակումն ու հիմնավորումը» ենթագլխում հեղինակը ներկայացրել է «Հայրենագիտական դասընթաց» մշակելու անհրաժեշտությունը և ներկայացրել է դասընթացի ամբողջական նկարագիրը(դասընթացը և պարապմունքների մեթոդական մշակումները ներկայացված են հավելվածներում):

Դասընթացը ծավալուն է, կցանկանայինք նշել մի քանի կարևոր, արժեքավոր թեմաներ՝

- Հայաստանի պետական խորհրդանիշներ,
- Հայրենիք և հայրենասիրություն,
- Հայ ժողովրդի հերոսները և հաղթական ճակատամարտերը,
- Հայ ժողովրդի ձեռքբերումները պատմական տարբեր ժամանակներում,
- Հայաստանի ազգային հերոսներ:

Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրության համար հեղինակը, ելնելով և սեփական փորձից, ներկայացրել է դրանց մեթոդական և բովանդակային բաղադրիչները՝ հաշվի առնելով ավագ դպրոցականների տարիքային առանձնահատկությունները:

«Հայրենագիտական դասընթաց»-ի փորձաքննությունն ու ներդրումը» վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացվել է մեթոդական համակարգը, որի իրականացման արդյունքները վկայում են փորձարարական աշխատանքների արդյունավետության մասին, ինչից պարզ է դառնում, որ փորձարարական խմբում, ի տարբերություն ստուգողական խմբի, դասընթացի ներդրման արդյունքում սովորողների մոտ խորացել է ազգային ինքնագիտակցությունը, ինչը հենվում է ազգային արժեքների, պետական խորհրդանիշների, ազգային հերոսների, հաղթական ճակատամարտերի մասին ընդլայնված գիտելիքների վրա, ինչի արդյունքում ավելացել է նրանց հասարակական ակտիվությունը:

Ատենախոսությունում լուծված են նպատակից բխեցված հետազոտության խնդիրները, հիմնավորված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են աշխատանքի արդյունքները, որոնք հավաստում են նպատակի և խնդիրների իրականացված լինելը:

Ատենախոսության շարադրման ոճը, լեզուն համապատասխանում են թեկնածուական գիտական հետազոտությանն առաջադրվող ակադեմիական պահանջներին:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Ատենախոսությունը տրամաբանական, կառուցվածքային առումով ավարտուն, ինքնուրույն, ամբողջական գիտական արդյունք է , հետազոտության թեման արդիական է, հիմնախնդրի ոլորտում արված է ծանրակշիռ հետազոտություն:

Նշված առավելությունների կողքին կարելի առանձնացնել որոշ նկատառումներ.

1. 1-ին գլխի 2-րդ ենթագլխում քննարկվում են հասարակագիտական առարկաների հայեցակարգերը, որտեղ, սակայն, չեն վերլուծվել մի շարք այլ առարկաների հայեցակարգեր, որոնք ունեն աշխարհայացքային կարևոր նշանակություններ (ֆիզիկա, կենսաբանություն):
2. Ատենախոսի նպատակը և առարկան չեն համապատասխանում թեմային, քանի որ թեմայի մեջ ձևակերպված է հասարակագիտական առարկաների դերը ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության գործընթացում, իսկ հետազոտության առարկայի և նպատակի մեջ «հասարակագիտական առարկաներ» եզրույթը դիտարկված չէ:
3. 3-րդ գլխի 2-րդ ենթագլխում ատենախոս Գ. Էմինյանը ներկայացրել է ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության մեթոդական համակարգը, որն իր բովանդակությամբ ունի մոդելի կառուցվածք:

4. Ներածության մեջ արտացոլված խնդիրները շատ սեղմ են և բովանդակային առումով թերի են արտահայտում ատենախոսության ողջ ծավալը:
5. Առկա են լեզվաոճական և տեխնիկական որոշ անհարթություններ:

Արված նկատառումներն ընդհանուր առմամբ չեն ազդում հետազոտության արժեքի և այն գնահատականի վրա, որին իրավամբ արժանի է ատենախոսությունը:

Գագիկ Կառլենի Էմինյանի «Հասարակագիտական առարկաները որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն գիտական հետազոտություն է, որն ունի տեսական և գործնական նշանակություն, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, և ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար նեկայացվող պահանջներին, և հեղինական արժանի է իր հայցած գիտական աստիճանին :

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկ. գիտ. թեկնածու՝ **Հովիկ ԲԼԲՈՒԼՅԱՆ**

Հովիկ Բլբուլյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի
գիտքարտուղար՝ Հասմիկ ՓԻԼԱՎՋՅԱՆ
,, 18,, 10 2022 թ.